

տարաւ բազում մեծ թօրեր եւ նա ընդ իւր :
 20 Եւ այսպէս վուժով ժողովեցան կոյտ ընդ կոյտ
 եւ բանակեցան եւ ժամադրեալ տեղին , ուր էր
 սովորութիւն :

Իսկ հպարտ եւ գոռոզն Օսման եօթնազլխի
 վիշապն՝ հրամայեաց զօրացն մերձ դալ բա-
 25 նակին Լէհաց , ապաւինեալ ի զօրութիւն բազ-
 կին եւ յաղթութիւն զօրաց եւ ոչ յԱստուած :
 Եւ ոչ յիշեաց զգիրն զայն , թէ Մինն հազար
 հալածէ եւ երկուքն զբիւրս շարժէ . եւ Մաղ-
 մոսն որ ասէ , թէ Սուտ է ձի ի փրկութեան ,
 30 ի բազում զօրութեան իւրում . եւ թէ Մի պար-
 ծեացի մեծն ի մեծութեան եւ մի հօրն ի զօ-
 րութիւն , այլ Տերամբ պարծեսցին . եւ թէ Վայ
 որ պարծի եւ ոչ Տերամբ . զոր եւ այլ բազումս
 պացես ի սուրբ Գիրս :

35 Եւ օր մի եղեալ մարտ՝ դիպան ճակատ
 առ ճակատ¹ . անկան յերկուց կողմանց յօլովք :
 Իսկ հեթմանն քանզի խոր իմաստուն էր , նախ
 Սաղախնուն հրամայեաց ցրուիլ ի դաշտս , ի
 յանտառս եւ ձորամէջս . դարանակալ եղեալ
 40 դաւաճանէին եւ գողանային զմարդ եւ զանա-
 սուն , զզէն եւ զասպառ եւ զայլն . եւ ի գիշերի
 սողային ի վերայ որովայնի եւ յանկարծակի
 անկեալ ի վերայ բանակաց բազում վնաս

23 գորոզն : — 25 Լէհա : — 36 անկաւ երկուց...
 ոլովք :

¹ Օսմանեանց առաջին յարձակումը տեղի ունե-
 ցաւ 1622, Սեպտ. 8ին. եւ վերջինն՝ վեցերորդը Սեպ-
 տեմբ. 24ին : Hammer, II, 790—791 :